

կոր պաշտօնեաներ ղրկեց անոր գործադրութեան համար: Սակայն այդ նահանգներուն կղերն ու հայ աշխարհականները, որոնք բոլորովին աղքատ են եւ շարունակ կեղեքուած՝ հարստահարութիւններով, հարկահանութիւններով, տուրքերով ու սակերով, երբեք չուզեցին վճարել: Մարաստանի եւ Վրաստանի կառավարիչները իրազեկ ըլլալով խնդրին, արգիլեցին իրենց քրիստոնեայ հպատակներուն ամենաչնչին դրամն իսկ վճարել, եւ յայտարարեցին՝ թէ Հայաստանի Կառավարիչը եթէ այնչափ բարի է Պատրիարքին հանդէպ, թող հարկահանութիւնը կատարել տայ իր նահանգին եկեղեցիներուն մէջ: Ուստի հարկ եղաւ դարձեալ գրել Արքունիքին այս խնդրին առնչութեամբ: Բայց Հայաստանի Կառավարիչը վախնալով որ Պատրիարքը բացակայի կամ ուզէ անձամբ Արքունիքն երթալ, իրեն հրամայեց Երեւան մնալ, եւ այն տեղէն չհեռանալ առանց հրամանի» (2):

Այս կերպով, Պարսկահայաստանի Կառավարիչը կամ Երեւանի Խանը, Սաֆի Ղուլի, նաեւ իր վրէժը կը լուծէր Յակոբ Կաթողիկոսէն, որ չէր ուզած իրեն տալ էջմիածնի լճակներէն մին (3): Հայրապետն ի դուր խնդրած էր իրմէ, որ թոյլ տայ Իսպահան երթալ, եւ այն տեղի հայոց մօտ հանդանա-

(2) Chardin, Voyages en Perse et autres lieux de l'Orient, Rouen 1723, Tome II, pp. 276-278.

(3) Զաֆարիա, 76: Զաւրա, 156, 199: